լութեան ժամանակ՝ ՉԼԶ (= 1287) թուին, երբ նուիրատուները ջուր են բերում և այդին տնկում։

Ո՞վ է Յովհաննէս հայրապետը. այստեղ, անշո՛ւշտ, կաթուղիկոսի կամ պատրիարքի իմաստով չէ գործածուած «հայրապետ» բառը, այլ արքեպիսկոպոսի կամ մետրապոլտի, ինչպէս անուանում էին իրենց Բջնիի կամ Արարատեան կամ Սիւնեաց մեծ եպիսկոպոսները։ Պռոշեան իշխանութեան մէջ այդ ժամանակ Յովհաննէս անունով եպիսկոպոս յայտնի չէ. Դեղարդում Մխիթար Այրիվանեցին էր ուսումնական թուականներին, ինչպէս տեսանք վերև. Վայոց ձորում Պռոշեանց հոգևոր կեդրոնը Գլաձորն էր, բայց ոչ իբրև եպիսկոպոսարան, այլ բարձրագոյն դպրոց, «համալսարան» կամ վարդապետարան, նախ Ներսէս Մշեցու, ապա 1284 թուից յետոյ՝ Եսայի Նշեցու և Դաւիթ վարդապետի ղեկավարութեամբ. Թանատի վանքը Վայոց ձորում նոյնպէս եպիսկոպոսարան չէր։ Մեզ յայտնի է, թէ ինչպէս անյաջող անցաւ Պռոշ մեծ իշխանի փորձը Վայոց ձորի իւր կալուածները Սիւնեաց հոգևոր տեսչութիւնից հանելով, Ապրակունեաց Յովհաննէս եպիսկոպոսի տեսչութեան տակ դնել(*)։ Այստեղ, ուրեմն, խօսք կարող է լինել միայն Բջնիի կամ Արարատեան թեմի եպիսկոպոսութեան մասին, որին ենթարկւում էին Բջնիի և Կոտայքի շրջաններից զատ, նաև Խոր վիրապը և Վեղիի վերին՝ աջ թևի՝ ակունքները. յիրաւի, Բջնիի Գրիգոր եպիսկոպոսին 1287 թուին յաջորդեց Յովհաննէս եպիսկոպոսը, որ ապա մասնակից եղաւ ընդդէմ Անաւարզեցու ձեռնարկին 1295 թուին. Մկրտիչ աբեղայ գրիչը յիշում է նորան իւր յիշատակարանի մէջ 1298 թուին, որպէս արհիեպիսկոպոս Բջնոյ և վերատեսուչ Այրարատեան նահանգին ևն., ինչպէս ցոյց ենք տուել առաջ։ Արձանագրութեան մէջ յիշուած տեղւոյն իշխան կամ պարոն Աշոտը պէտք է վերոյիշեալ Վասակ Խաղբակեանի որդին լինի, Գրիգոր Խաղբակեանի թոռը։

Բացի յիշատակուածներից բաւական շատ են անթուական արձանագրութիւնները, որոնք մեծ մասով ԺԳ. դարից պիտի լինին, բայց դժուար է ժամանակը ճշդիւ որոշել. այսպէս եկեղեցու ներսը, հիւսիսային կողմից, միջին թևի արևմտեան կողմը՝ Յոհաննա որդի Մխիթարը արդիւնք է տալիս և մի քառասունք ստանում (Ա. 140). տաճարի արևմտեան պատի վերայ, դրան ձախ կողմը դրսից, Աբէլ վարդապետի խաչքարից դէպի հարաւ, Գերասիմ անունով մէկը քառասուն դեկան է տուել եւ երկու պատարագ ստացել (Ա. 141)։ Սորա տակն է ոմն Խաչատուրի արձանագրութիւնը, որ տուել է իւր հայրենի այդին եւ երեք պատարագ ստացել (Ա. 142). Յովհաննէսը քառասուն դահեկան է տուել և մի պատարագ ստացել (Ա. 143). Թադէոս անունով մէկը, մի խաչ է փորագրել տուել, մահուանից յետոյ մի քառասունք ստացել (Ա. 144)։ Հաւուց Թառի «չպետ» (հովիւ) Գրիգորը քառասուն դահեկան է տուել և երկու պատարագ ստացել (Ա. 145). այս միևնոյն անձը արձանագրութիւն ունի և Հաւուց Թառում, ուր յայտնում է, թէ ծառայութիւն է արել և արդիւնք տուել, երեք ժամ ստացել. Հաւուց Թառի արձանագրութիւնը 1214 թուից յետոյ և 1293 թուից առաջ է գրուած, ուրեմն և այս թուականների մէջ պիտի գրուած լինի Ս. Ստեփանոսի արձանագրութիւնը, կարծում ենք երեսնական թուականներին, արձանագրութեան տեղից դատելով, Մխիթար և Սարգիս եղբայրների արձանագրութեան տակ, իսկ սրանց և Զաղի արձանագրութիւնը նոյն գրչութեամբ է գրուած։

Աւելի շատ են հարաւային պատին եղած արձանագրութիւնները, բայց շատ փչացած վիճակում. Աբիսալի որդի Դորգին՝ Բաբուռի հողը տուել է «ի Հռոմա Աղչոց վանացն» իւր որդիների արևշատութեան համար (Ա. 121), որ գրուած տեսանք Իւանէի ՈԿԱ. (= 1212) թուի արձանագրութեան տակ և նոյն գրով, ուրեմն հնագոյն արձանագրութիւններից մէկը։ Տարաբաղդաբար շատ է փչացած Վանենու արձանագրութիւնը (Ա. 146). սա, գուցէ, Զաջուռ Խաղբակեանի, Գրիգորի և Վասակի եղբօր, դուստրը լինի, նշանաւոր հանգիստացած իւր երկու մեծադիր, երկաթագիր, մագաղաթի աւետարաններով(*)։ Մխիթար կրօնաւորը իւր հալալ արդիւնքից տուել է քառասուն դահեկան և տարին երկու պատարագ ստացել (Ա. 147)։ Բարիոք անունով մէկը տալիս է քառասուն դեկան (Ա. 148). Խաչանելը նոյնպէս և երկու պատարագ ստանում (Ա. 149)։

Տաճարի ներսը արևմտեան պատի վերայ, դէպի հարաւ, «Յերկայն» Մխիթարի արձանագրութիւնն է, որով վաթսուն դահեկան նուէր է տալիս եկեղեցուն և երեք պատարագ ստանում, երկուսն իրեն, մէկը ծնողներին (Ա. 150)։ Հիւսիսային պատի վերայ, սանդուղներից բարձր, երկու արձանագրութիւն փչացած է. նրանց մօտ է Նազկիկի և Ոհանի արձանագրութիւնը, որով յիսուն դահեկան են տալիս և չորս ժամ ստանում (Յաւել. Ա. 151)։

Մենք չենք յիշում այնպիսիները տաճարի ներսը և դուրսը՝ հարաւային պատին՝ որ չափազանց եղծուած են և դժուար է միտք հանել կամ նուիրատուի անունը որոշել։

Մի խաչքարի վերայ, որ հագցրած է տաճարի արևմտեան պատին, դրան մօտ՝ գրուած է. «Ցիշեցէք ի Քս. զՀասան զորդի Սմբատա զծառա Քի. եւ ողորմեա». հաւանօրէն ԺԳ. դարի գործ (**)։

Արձանագրութիւնների այսպիսի յաճախումը ցոյց է տալիս, թէ այս վանքն իրօք մի կարևոր կեդրոն է

(*) Խաղբակեանք Ա. 95-96։ Օրբէլեան. 364/5։

(*) Խաղբակեանք Ա. 27-29, 33-34։

(**) Ouvarova, Mat. XIII. 57։